Հավելված N 5
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023 թվականի մարտի 22 -ի N 59- Լ որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի /այսուհետ՝ մարզպետի աշխատակազմ/ զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժինը /այսուհետ՝ Բաժին/ հանդիսանում է հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2.Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Տարածքային կառավարման մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին», «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության, վարչապետի և քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի (այսուհետ՝ Մարզպետ) որոշումներով, գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Բաժնի լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3. Բաժինը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է ՀՀ վարչապետը:

4. Բաժնի կանոնադրությունը հաստատում /փոփոխում/ է Մարզպետը:

II. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժինն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) տարածքային կառավարման մակարդակում իրագործում է տնտեսության զարգացման բնագավառում Կառավարության քաղաքականությունը.

2) ապահովում է ՀՀ Վայոց ձորի մարզի /այսուհետ՝ Մարզ/ զարգացման ռազմավարության մշակումը և մշտադիտարկման իրականացումը.

3) ապահովում է Մարզի զարգացման ռազմավարության իրականացման տարեկան գործունեության ծրագրի մշակման և լիազորված մարմնի հաստատմանը ներկայացնելու աշխատանքների, ինչպես նաև հաստատված ծրագրի

4) կազմակերպում և իրականացնում է Մարզի սոցիալ-տնտեսական (ըստ ճյուղերի և բնագավառների) զարգացման ռազմավարության և հիմնադրույթների մշակման աշխատանքները.

5) կազմակերպում է Մարզի համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի վերլուծության, ծրագրերի կատարման ընթացքի և արդյունքների վերլուծության աշխատանքները.

6) կազմակերպում և համակարգում է Մարզի համայնքներից ներկայացվող սուբվենցիայի ծրագրերը, վերահսկում է ծրագրերի իրականացման գործընթացը: Կատարում է ընթացքի մեջ գտնվող ծրագրերի մշտադիտարկում, ներկայացնում հաշվետվություններ.

7) ապահովում է փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտով զբաղվող նախարարությունների, գերատեսչությունների, մարզային կառույցների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությունը.

8) կազմակերպում է Մարզի փոքր և միջին ձեռնարկատիրության ծրագրերի առաջնահերթությունների և գերակայությունների որոշման, զարգացման ծրագրերի քննարկման աշխատանքները.

9) կազմակերպում է Մարզի փոքր և միջին ձեռնարկությունների և ձեռնարկատիրական համակարգի աշխատանքների մասին տեղեկատվության ստացման և վերլուծության աշխատանքների կատարումը.

10) իրականացնում է Մարզում զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակման աշխատանքները.

11) կազմակերպում է զբոսաշրջության ոլորտի գրանցամատյանների կազմման, վարման, թարմացման, վարչական ռեգիստրի ներդրման և տեղեկատվական բազայի ստեղծման գործընթացներին մասնակցության աշխատանքները.

12) ապահովում է այլ երկրների համապատասխան մարմինների և միջազգային զբոսաշրջային կազմակերպությունների հետ հարաբերություններում Հայաստանի Հանրապետությունը և Մարզը ներկայացնելու, բանակցային գործընթացի իրականացման, զբոսաշրջային բնագավառում մարզին վերաբերող համագործակցության փաստաթղթերի, ծրագրերի մշակման աշխատանքները.

13) միջոցառումներ է ձեռնարկում Մարզի տարածքում տնտեսվարող սուբեկտների գործունեության ընդլայնման և արդյունավետության ապահովման ուղղությամբ.

14) աջակցում է Մարզում նոր արդյունաբերական կառույցների և հանգույցների ստեղծմանը, վերջիններիս գործունեության հաշվառմանը, ապահովում է նրանց կապը շուկայի հետ.

15) աջակցում է Մարզի սոցիալական աջակցության պետական ծրագրերի իրականացման աշխատանքներին.

16) կազմակերպում և իրականացնում է Մարզի ընթացիկ և հեռանկարային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի նախագծերի կազմման և Մարզպետի հաստատմանը ներկայացնելու աշխատանքները.

17) աջակցում է միջազգային դոնոր կազմակերպություններին Մարզի համար առավել կենսական ծրագրերի իրականացման նպատակով.

18) Բաժնին վերապահված լիազորությունների շրջանակներում կազմակերպում և համակարգում է Մարզի տարածքում մարզային համապատասխան ծրագրերով

տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները.

19) իրականացնում է Մարզի քաղաքացիական պաշտպանության բնագավառում Բաժնին վերապահված գործառույթներ.

20)իրավական և մասնագիտական հսկողության շրջանակում իրականացնում է հսկողություն Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններում, օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան առաջարկություններ և անհրաժեշտ տեղեկատվություն է ներկայացնում Մարզպետին.

21) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն: Ուսումնասիրում է քաղաքացիների դիմումները, բողոքները և առաջարկությունները: Անհրաժեշտության դեպքում տալիս է մեթոդական պարզաբանումներ, տրամադրում խորհրդատվական օգնություն.

22) նախապատրաստում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ: Ըստ անհրաժեշտության՝ Գլխավոր քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ՝ Բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

23) Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, Գլխավոր քարտուղարի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Մարզպետը: Գլխավոր քարտուղարը պատասխանատու է Բաժնի գործունեության կազմակերպման համար:

7. Բաժնի պետը անմիջական հաշվետու է Մարզպետին: Մարզպետը բաժնի պետի անմիջական ղեկավարն է:

8. Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:

9. Բաժնի պետը պատասխանատու է Բաժնի առջև դրված խնդիրների և Բաժնին վերապահված գործառույթների իրականացման համար:

10. Բաժնի պետը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

11. Բաժնի պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: